ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

# ՏԱՐԵԳԻՐՔ

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԻՎ 2-3 | 2014 - 2015

ԵՐԵՎԱՆ 2015

# ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիգեն Ղազարյան
ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼՈՒՄ..............9

Феликс Тер-Мартиросов
ПРЕЕМСТВЕННОСТЬ КУЛЬТА ДВУПОЛОГО БОЖЕСТВА В УРАРТУ И АРМЕНИИ..............19

Մուրադ Հասրաթյան
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ..............31

Դավիթ Քերթմենջյան
1915Թ. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՄԵՄՈՐԻԱԼ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..............39

Սիմոն Հմայակյան
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ 1916 Թ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆՈՒՄ..............54

Հակոբ Սիմոնյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ..............70

Քնարիկ Ավետիսյան
ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ..............88

Սաթենիկ Վարդանյան
ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼԸ» ԿՏԱՎԸ..............98

Евгения Калантарян
ТРАНСФОРМАЦИЯ И РЕМИНИСЦЕНЦИИ ЕГИПЕТСКИХ И
АНТИЧНЫХ ТРАДИЦИЙ В МИРОВОЗЗРЕНИИ РАННЕГО ХРИСТИАНСТВА..............112

Ելենա Այդինյան
ՍՏԵՓԱՆ ԹԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՎԵՐՋԻՆ ԵՎ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲԻՆ..............123

Գրիգոր Գեղամյան
ԼԱՔԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԻՉՆԵՐԻ ՇՈՒՐՋ..............139

Գագիկ Մանուկյան
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ..............146

Աշոտ Հարությունյան
ՀԱՍՏՈՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱՅԻ ԵՎ ԳՐՔԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ԿԱՊԸ..............152

Իրինա Շախնազարյան
ԱՐՎԵՍՏԻ ԲՆՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ..............160

Աննա Համբարձումյան
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ..............179

Արթուր Աթայան
ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ..............200

Նունե Մինասյան
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ»
ՊՈԵՄԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ..............217

Манэ Давидова
ОСНОВНЫЕ РАЗНОВИДНОСТИ БАТИКА..............228

Անի Անանյան
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ ԸՍՏ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ..............242

Patricio Der Krikorian
INTRODUCTION TO ART IN LATIN AMERICA..............253

Արտակ Աղլամազյան
ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԸ ԵՎ ՆՐԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ..............257

Սաթենիկ Հայրիյան
ՌՈԲԵՐՏ ԱՍԿԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ..............267

# ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սվետլանա Գևորգյան
ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ
ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ (XIX ԴԱՐԻ 70-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ) ..............276

Անժելա Քալոյան
ՏԵՐՅԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՍԻՐՈ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ..............289

Светлана Арзуманян
О ФЕНОМЕНЕ NON FINITO
/НЕЗАВЕРШЕННОСТИ/ ПРОИЗВЕДЕНИЙ ИСКУССТВА..............300

Заруи Малоян
ПРЕДСТАВЛЕНИЕ О ЗНАНИИ, МУДРОСТИ
И ТВОРЧЕСТВЕ В СВЯЩЕННОМ ПИСАНИИ..............313

Հայկազուն Ալվրցյան
ԹԻՎԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ..............323

Գասպար Ավագյան
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՆԻԿԼԱՍ ԼՈՒՀՄԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ..............330

Անահիտ Մկրյան
ԻՏԱԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՎԵՍՏԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..............336

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ..............352
Նախաբանը՝ Վարդան Ազատյանի

# ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ
# 1916 Թ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆՈՒՄ

ՍԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ
*Պատմ. գիտ. թեկնածու, ԵԳՊԱ դոցենտ*
*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

Վանում հնագիտական ուսումնասիրություններ կատարելու գաղափարը Հովսեփ Օրբելու մոտ ծագել էր դեռեւս 1911 թվականին, երբ նա Թոփրաք Կալեում հայտնաբերեց պատկերազարդ մի բարձրաքանդակ (նկ. 1): Վանում գեներալ Զաքիր փաշան առաջարկեց զինվորներ եւ ֆինանսավորում՝ այստեղ պեղումներ սկսելու համար: Հինգ տարի հետո այդ նույն զորքը ձեռնարկեց Պետերբուրգի գիտությունների ակադեմիան, եւ իրագործեցին ռուս զինվորները:

1911-1912 թթ. գիտարշավի նյութերի հրատարակումը մեծապես օժանդակեց նոր գիտարշավի մասին գաղափարի ձեւավորմանը ռուսական միջավայրում: Իր զեկույցներում Հովսեփ Օրբելին մանրամասն պատմում էր Վան-Տոսպում իր հայտնաբերած ուրարտական հուշարձանների մասին՝ հիմնական ամրոցների ու դղյակների, որոնք մասամբ անհայտ էին մնացել Լեհման-Հաուպթին եւ Վալդեմար Բելքին: Առանձին ուշադրություն էր հրավիրված Հայկաբերդի ամրոցի վրա՝ որպես պեղումների համար ամենահեռանկարայինի. այս ամրոցն ավելի ուշ պեղվեց թուրք հնագետների կողմից, որոնք հնավայրն անվանեցին Չավուշ Թեփե: Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին արձանագրություններ, որոնց քննությամբ պարզվեց, որ ամրոցը ժամանակին կոչվել է Սարդուրիխինիլի: Հայկաբերդն ուներ եւ այլ անուն՝ գրառված Հ. Օրբելու կողմից՝ *Աստվածաշեն*: Նա պատմում էր նաեւ իր հետազոտությունների մասին Թոփրաք Կալեում (Ռուսախինիլի): Այստեղ Հովսեփ Օրբելու հայտնաբերած բարձրաքանդակի մասին 1914 թ. արեւելյան բաժանմունքում զեկուցում կարդաց Բ. Վ. Ֆարմակովսկին «Обломки каменного фриза с резенными фрагментами из Вана» վերնագրով: Այս զեկուցումը մեծ տպավորություն է թողնում, եւ անմիջապես ընտրվում է հանձնաժողով, որ քննելու էր Թոփրաք Կալեում պեղումներ կատարելու խնդիրը: Հանձնաժողովի կատարած եզրակացության մասին 1914 թ. ապրիլի 24-ին զեկուցեց Բ. Ա. Տուրաեւը: Իր զեկույցում նա շեշտեց հետեւյալը. «*Վան արեւելյան հզոր պետության մայրաքաղաքը, որը գտնվում է Ռուսաստանի սահմանի մոտ, դեռ է ուսումնասիրվի ռուս գիտնականների կողմից*»: Բ. Ա. Տուրաեւը գտնում էր նաեւ, որ «*անհրաժեշտ է օգտվել բարենպաստ քաղաքական իրավիճակից եւ պեղումներ սկսել Մակուի խանության տարածքում, որի հարավային հատվածը ընդգրկված է եղել մանայական թագավորության կազմում, եւ որը հայտնի է մեզ միայն ասուրական տվյալներից*»: Առաջարկվում էր այս արշավախմբերի ղեկավար նշանակել Հ. Ա. Օրբելուն՝ նրան տրամադրելով 3-5 հազար ռուբլի:



Արշավախումբը ձեւավորվելու էր մեկ տարվա ընթացքում: Այս ընթացքում էլ լուծվելու էր դեպի Թուրքիա պեղումներ կատարելու թույլտվություն ստանալու խնդիրը: Ամռանն արդեն Օրբելին գործուղման թույլտվություն եւ գումար ստացավ Մակու եւ Ուրմիա մեկնելու համար: Սակայն, սկսված պատերազմը կանխեց այս նախաձեռնությունը:

1916 թ. փետրվարի 25-ին ակադեմիայի արեւելյան բաժանմունքում Ն. Յա. Մառը իր «Новые материалы по халдской эпиграфике из командировки И. А. Орбели 1911-1912 гг. в Турецкую Армению и делибабинская надпись» վերնագրով կարդացած զեկուցումն ավարտում է՝ ասելով, որ Թուրքիայում պեղումներ սկսելու համար չարժի սպասել պատերազմի ավարտին, քանի որ դրանք անչափ կարեւոր են թե՛ գիտական եւ թե՛ քաղաքական առումներով: Նույն նիստում էլ հանձնարարվում է Ն. Յա. Մառին եւ Ն. Ի. Վեսելովսկուն՝ սկսել դեպի Վան արշավախումբը կազմակերպելու աշխատանքները: Զարմացնում է այն հանգամանքը, որով Նիկողայոս Մառը եւ արեւելագետներն ու հնագետները ձգտում էին սկսել պեղումները՝ հակառակ քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմանների: Ամեն ինչ հաջող էր, եւ շատ արագ ավարտվեցին նախապատրաստական աշխատանքները: Գումարը ստացան Թիֆլիսում. ուշագրավ է, որ Մառը շեշտում էր, որ արշավախումբը նախապատրաստելիս վարչարարները չէին խանգարում իրենց, ինչպես սովորաբար լինում է, այլ ընդհակառակը՝ ամեն կերպ օժանդակում էին:

Արշավախումբն ունեցավ երկու ղեկավար՝ Մառը եւ Օրբելին: Նիկոլայ Յակովլեւիչը ստանձնեց հուշարձանների պահպանության հետ առնչվող գործողությունների վերահսկողության հետ կապված հարցերը կարգավորելու խնդիրը՝ երազելով ուսումնասիրել Վանա լճի ափեզերքը, Մուշը, Բիթլիսը եւ ռուսական զորքի հետ գնալ ավելի հարավ. վայրեր, ուր չէր հասել Ա. Վ. Տեր-Ավետիսյանի նախորդ արշավախումբը: Ավելին՝ հետո աշխատել Կովկասում որպես ազգագրագետ, բանահավաք, լեզվաբան: Նա Հայաստանում իրագործում է իր նախատեսած ծրագրերը, սակայն Կովկասում այդ ժամանակ աշխատել չի կարողանում:

Հունիսի 11-ին Մառը պեղումներ է սկսում Թոփրաք Կալեում, իսկ հունիսի 22-ին Օրբելին իր պեղումներն է սկսում Վանա ժայռի վրա:

Արշավախումբը մեծ չէր. դրա կազմում էին, բացի ղեկավարներից, ճարտարապետ Պ. Ե. Կնյազենիցկին, ազգագրագետներ Ա. Ա. Միլլերը եւ Ա. Գ. Աեշ-

կությունը հեղինակները ձոնել էին Փարիզի Ասիական ընկերության 100-ամյա հոբելյանին եւ Ֆ. Է. Շուլցի հիշատակին. նա հենց Ասիական ընկերության կողմից էր գործուղվել Վան՝ ստուգելու համար Մովսես Խորենացու տվյալները Վանի ժայռափոր կառույցների, արձանագրությունների եւ պալատների մասին, որոնք Մովսես Խորենացին թվագրել էր Շամիրամ թագուհու գահակալության տարիներով՝ շատ ճշգրիտ:

Շուլցն սպանվեց 1829 թ. Ջուլամերկի լեռներում, հետազոտություններ կատարելիս, մի քուրդ ցեղապետի կողմից (Լեհման-Հաուպթ, 1936, 246): Նրա գիրքը հրատարակվեց 1840 թ. (Շուլց, 1840), եւ հենց այդ թվականից էլ սկսվում է ուրարտագիտությունը:



ARCHAEOLOGICAL INVESTIGATIONS OF H. ORBELI IN VAN IN 1916

SIMON HMAYAKYAN
PhD in Historical sciences

An idea of archaeological expedition in Van started up in Academy of Sciences of Saint Petersburg in 1914, when materials collected there by H. A. Orbeli in 1911-1912 had been studied.

The expedition was ready to start the project in 1915, but the war, which broke out suddenly, hindered the investigation. Nevertheless, H. A. Orbeli and N. Ya. Marr conducted the expedition in Western Armenia during the wartime. It is noteworthy, that three members of expedition were Armenians, and earlier S.V. Ter-Avetisyan was delegated to Western Armenia for the record of historical monuments. In 1916 the project was continued by N. Marr and P. N. Makintsyan. The ethnographical data was collected by A.A. Miller.

H. Orbeli worked in accordance with canons of classical archaeology. As a result, the measurement of Van caves described by Movses Khorenatsi was carried out (architect P. Knyagnitski), the architectural peculiarities of Van rock fortress walls were studied, the period of their demolition was determined (X century), as well as the "platform" of Gandzadur (Sarduri platform) with two niches was excavated. The huge statuette of king Argishti was placed in one niche, and the statuette of king Sarduri covered by ochre in another.

Armenian inscriptions, crosses and burials of noble Armenians were found in niches; interesting folklore material linked to the newly found monuments was collected.

The results of expedition were published in 1922. This remarkable publication was devoted to the 100th anniversary of Asian society of France and in memory of F. E. Schultz.

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ И. А. ОРБЕЛИ 1916 Г. В ВАНЕ

СИМОН АМАЯКЯН
Кандидат истор. наук

Идея об отправлении археологической экспедиции в Ван возникла в Академии наук Санкт-Петербурга еще в 1914 г., когда были изучены собранные там в 1911-1912 гг. Иосифом Орбели материалы.

Экспедиция уже была готова пуститься в путь в 1915 г., однако вспыхнувшая война стала тому препятствием. И.А. Орбели и Н. Я. Марр посчитали делом чести начать раскопки в Западной Армении именно во время войны, невзирая на обстоятельства. Примечательно, что трое членов экспедиции были армянами, а ранее в Западную Армению был командирован С. В. Тер-Аветисян для учета исторических памятников. В 1916 г. это дело было продолжено Н.Я. Марром и П.Н. Макинцяном. Сбор этнографических материалов был осуществлен А.А. Миллером.

И.А. Орбели работал в соответствии с канонами классической археологии. В результате был произведен обмер пещер Вана (архитектор П.Е. Княгницки), которые были описаны еще Мовсесом Хоренаци, были изучены конструктивные особенности крепостных стен Ванской скалы, определено время их разрушения (X век), была раскопана "платформа" Гандзадура (платформа Сардури) с двумя нишами. В одной нише в свое время стояла стела Аргишти, а в другой – Сардури. В нишах были выявлены армянские надписи, кресты и захоронения двух знатных армян. Кроме этого, был собран интересный фольклорный материал, относящийся к найденным памятникам.

Отчет о деятельности экспедиции был опубликован в 1922 году. Эта замечательная публикация была посвящена столетнему юбилею французского "Азиатского общества" и памяти Ф. Э. Шульца.